

ՊԱՅՄԱՆՔ

Թէ՛ Կ. Պոլսոյ եւ Թէ՛ դատարան համար
հարկէ կան դին 480 ֆշ.
« Երկրորդ » 90 »
« Երկրորդ » 40 ֆր.
« Երկրորդ » 40 »
Փոքր
Պատուական տուր մէկ անգամի հա-
մար 2 դուրուշ, երկու անգամի հա-
մար 60 փարայ, աւելի անգամներ
բոլ. համար 40 փարայ :



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Կուրս պայմանաւորաբար ճանրու-
ծալը կ'աւարտուի թիւն մը :
Կարգադրուողներու համար
կամ որ եւ ինչ որ թիւն խնդրուի
— հարկէն աւելի ուղղութիւն, Կ. Պո-
լսոյ, Չինիի խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չ'ընդարձակու-
մակ չ'ընդունուի :

ԵՐԱՆԱՆՈՒՊՈՒՄ 7 ՅՈՒՆԻԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հոռոմէն գրուած նամակ մը՝ Պա-
պական Բնդհանուր Ժողովին վրայ հե-
տեւեակ տեղեկութիւնները կուտայ,
որոցմէ կը անհնաւի, Թէ՛ յիշեալ ինք-
նակոչ տեղեկական Ժողովին ոչ միայն
հոգին այլ եւ ընթացքն ալ բոլորովին
հակառակ է նախնի տեղեկական Ժո-
ղովը ընթացքին :

Այս միջոցին Հոռոմ գումարուած
եպիսկոպոսներէն շատերը մէկնէկու-
հետ ըրած մտերմական տեսակցու-
թեանց մէջ կը գտնուէին Պապին հը-
րատարակած այն կանոնադրութեան
դէմ, որ Ժողովին գործողութեանց ե-
ղանակն եւ ընթացքը կը կարգադրէ,
եւ որուն վրայ Ժողովին անդամները
գիտորդութիւն ընելու իսկ իրաւունք
չունին :

Մէկ կողմէն եպիսկոպոսաց
իրաւունքը կը արուի Ժողովին ինքի-
նէր, ներկայացնելու կամ առաջար-
կութիւններ ընելու, բայց միւս կող-
մէն այս իրաւունքը կը սահմանուի Պա-
պին ընտրուած յանձնաժողովի մը մի-
ջոյսով, որոյ պաշտօնն է՝ եպիսկո-
պոսաց ինքիւնները քննելով որոշել Թէ՛
Ժողովին ներկայացուելու արժանի՝ են
Թէ՛ ոչ, եւ եթէ արժանի դատեն, Պա-
պին հաւանութիւնն ալ ստանալէ ե-
տեւ Ժողովին ներկայացնել :

Յիշեալ յանձնաժողովը Հոռոմի ար-
քանսաց ամենէն հաւատարիմ եւ
անձնուէր եպիսկոպոսներէն ու կար-
գեալներէն բաղկացել է, որոց մէջ
է կըսեն նաեւ Գեր. Հատենեան՝ կա-
թոլիկ հայոց Պատրիարքը :

Ժողովին քարտուղարներն ու քննիչ-
ներն ալ փոխանակ Ժողովին ընտրու-
ւելու՝ Պապին ընտրուած են :

Եպիսկոպոսներն այս գտնադա-
տանքն իրարու կընեն մտերմաբար, բայց
Ժողովին մէջ ձայն հանելու չեն հա-
մարձակիր. ուստի էլ յուսացուի որ
անդադրեալականաց ծրագիրը զորա-
ւոր ընդդիմութիւն մը դանկ Ժողովին
մէջ :

Ուրիշ անպատեհութիւն մ'ալ Ս.
Պետրոսի եկեղեցւոյն մէջ պատրաստ-
ւած Ժողովատեղին է, որուն մէջ ե-
ղած խօսակցութիւնները լսել անհնա-
րին է : Սիշեալ սրահը՝ որոյ զարդու-
քը համար Գրպը 150000 ֆրանք ծախ-
քած էր, ցոյցի համար գումարումնե-
րու եւ ատենախօսութիւններու կրնայ
յարմարիլ, բայց խորհուրդ կամ վի-
ճաքանութիւն ընելու անյարմար է :
Ուստի կըմտածուի՝ համադրուած Ժո-
ղովը քաղաքին մէջ տեղերը գտնու-
ւած ուրիշ եկեղեցւոյ մը մէջ գու-
մարել. վասն զի Ս. Պետրոսի եկեղեցին
վերջիվերջ աւայարմարութիւնէն դատ-
ւած չ'աւարտուած ըլլալով, եպիսկոպոսնե-
րէն շատերը հոն երթալու համար մէկ
ժամու մօտ ճանրայ քաշելու կը պար-

տաւորին, եւ այս ալ շատ դժուար է
ծերերուն համար : Իսկ կատարել
Ժողով համար ալ ստակ պէտք կըլլայ :
Այս տեղեկութիւնները գրող նա-
մակը կըսէ Թէ՛ ընդհանրական Ժողո-
վին պատճառաւ Հոռոմ դաշտը օտարա-
կանաց թիւը խիստ քիչ է, եւ հազիւ
15 հազար հոգի կը հասնի :

Ասոր պատճառն այս կը համարուի,
որ արդի Կաթոլիկ գրութեան մէջ աշ-
խարհական հաւատացեալներն ու պարզ
քահանաները կընակեան խնդրոց մէջ
ձայն չունին, այլ ինչ որ նուիրապե-
տութեան վերին կարգերուն մէջ ու-
րուի, անոր կործանէն հաւատալու եւ
հնազանդելու պարտական են :

Ինչ հարկ կայ ուրեմն Հոռոմ իրթալու
եւ Ժողովին գործողութեանցը ներկայ
գտնուելու, երբոր ձայն չունին : Ի-
րենցմէ ուղղութիւն միայն աղօթել,
նուէրներ տալ եւ Ժողովին որոշմանը
կանխաւ հնազանդութիւն յայտնել :

Հարաւային Դաղմատիայէն առ-
նուած լուրերը կը ծանուցանեն որ
եթէ ապստամբաց հետ եղած բա-
նակցութիւններն անակնկալ դէպքով
մը չ'իջնին, խաղաղութիւնը շուտով կը
վերահաստատուի : Չորս շաբաթէ՛ ի վեր
ոչ ապստամբ, ոչ ալ զորքերը շար-
ժում ըրած են : Այսու ամենայնիւ կա-
ռավարութիւնը գարնան համար իր
պարտաւորութիւնները կը շարունակէ :
Վիէնայէն երկաթի մարտիկները զըր-
կուցան, որք թիւղանոթներուն հետ
կառքով կը քաշուին տարուին : Զօրաց
համար ամբարներ եւ հիւանդանոցներ
ալ հաստատուեցան, որք մինչեւ հիմայ
Դաղմատիոյ այն կողմերը խիստ նուազ
էին, Թէ՛ այս պատրաստութեանց եւ
Թէ՛ ձմերուան խառնութեանց պատճա-
ռաւ ապստամբ հիմայ հնազանդելու
աւելի տրամադրութիւն կը ցոյցնելու
իրենց վիճակն ալ խղճալի է : Գիւղերն
այլեւս, արտերը ասից կ'աւան եղան,
իրենց կիներն ու զաւակները Դաղմա-
տիոյ ապստամբեցան, իրենց ոչխար-
ներն ու արջաւաններն առանց մարդա-
գետնի մնացած են, բայց ի Դաղմատի-
ոյ սահմաններէն, իստական զէնք ու-
նին եղեր, բայց ուսելիքն եւ հազ-
նելիքն հասնելու վրայ է : Սակայն
յուսահատութեան նշան չեն ցոյցնե-
րը պիտի դարձնալ Թէ՛ զինուորա-
կան օրէնքը կառավարութեան կրնայ
հետ անեցած դաշտաց հակառակ է,
եւ եթէ ցամաքային զինուորագրու-
թեան ենթարկի, իբրեւ ծովեզերեաց
Ժողովուրդ իրենց ապրուստի միջոց-
ներէն գրկուած կ'ըլլան իրենց պա-
հանջութիւններէն մէկն ալ այս է որ զէն-
քերէն չ'առնուի, բայց անկարելի կը
թուի որ Աւստրիական կառավարու-
թիւնն այսպիսի արածութիւն մը միայն
Դաղմատիոյ ներկայ կառավարիչը՝ ա-
պստամբաց հետ ներդաշնանութեամբ
վարուելու քաղաքականութիւն մ'ա-
ռաջարկէր է ի վիճման, մինչդեռ

Դաղմատիոյ կը կարծէին Թէ՛ իրենց
վրայ խիստ միջոցներ պիտի դորձա-
րուին եւ իրենց ազգային դեւտն
անգամ պիտի վերցուի :

Վիքթոր — Հիւսիս ծնունդի տունին
առթիւ իր սովորութիւն ըրած տա-
րեկան կոչուները առաւ մանկանց՝ Հօթ-
վիլ — Հառուս մէջ, ուր բաղմաթիւ Հը-
րաւորեալներ կային : Այս առթիւ
մանկանց ընծաներ բաշխելէ առաջ
հետեւեալ ճառը խօսեցաւ :

« Տիկններ. Ձեմ ուղեր այս ման-
կունքն երկար ապաստեցնել. ուստի կը
փութամ միայն քանի մը խօսք ըսել :
Ներկայ փոքրիկ գործողական գործը
40 մանուկներու համար միայն սահ-
մանաւ ըլլալով, ըստ ինքեան դուզ-
նաքայ բան մ'էր, եթէ՛ ինչպէս Մեդ-
դիւր եւ Ամերիկայի լրագիրները կը գը-
րեն, այս գործը տարուէ տարի չ'ընդ-
հանրանար, եւ եթէ ութ տարի յա-
ռաջ աղքատիկ մանկանց համար իմ
տունս սահմանաւ փոքրիկ կոչուն-
քը մեծ եւ բարերար անձանց շնոր-
հիւ կարեւորութիւն չ'առնուի : Եւ
համար մանկանց նպատակ մատուցու-
լով : Մեդդիւր եւ Ամերիկայի մէջ այս-
պիսի գլխաւորական գործերը շարու-
նակ ածելու վրայ են : Աղքատ ման-
կանց տրուած միտք եւ զինիւն կո-
չունքներուն թիւը չ'կայ : Տիկն Թօմ-
սին եւ Պ. Վոտսի այս մասին ձեռք
բերած սքանչելի արդիւնքը ծանօթ
նալ կըլլալ թիւը — Լինալը — Նիւզ Վե-
րազիլը Լինալայի մէջ աղքատ ման-
կանց կոչունք տրուած գիւղերի եւ ըն-
դարձակ որհններուն պատկերները
հրատարակեց : Ասոց հիմնադրելու Հօթ-
վիլ — Հառուս եղաւ, քանզի սկսելու խո-
նարհ պատիւն անոր կ'իյնայ : Լրագիր-
ներուն ջանքով ամեն երկիր ալ այս
բարեգործութիւնը կը ծառայի : Ամե-
րայն ուրեք քան զիս ըստդոյն ճի-
ղեր կ'ընեն, Մանկանց կոչունքու եղա-
նակը յաջողութեամբ յառաջ կ'եր-
թայ : Գաղղիոյ Մանկական օթեակնե-
րէն շատերուն շնորհակալութիւն կը
մատուցանեն իրենց ջերմ օժանդա-
կութեան համար : Շնորհակալ եմ նա-
եւ Հելուեական ընկերութեան, որ
իրեն նպաստանք ըրած է : « Աստուած,
մարդկութիւն եւ հայրենիք : « Շատ
տեղերէ նամակներ կ'առնուի կողմ
ջանքից վրայ : Ասոցմէ երկուքը, մէկը
Հայկթիւն, միւրը Գաղղիոյն մանուկ
ազգայնութիւն մ'ըրին վրաս : Նիւ-
ցէր ինձ որ այն առթիւ իմ համակ-
րութիւնս յայտնեմ այն երկու քաջ
ազգայ, որք ապստամբեան ձայնը
բարձրացուցին : Գաղղիոյ Մանկայ յու-
ժէն ապստամբ, ինչպէս Հայկթիւ Գաղ-
ղիայէն Հայկթիւ 1792 ին սեւերն ազա-
տելով այն սկզբունքին ազգայնական
ապստամբութիւն մարդ մը արիւ մարդ
մը Ժամանակիւ իրաւունք չ'ունի :
Գաղղիոյ ալ այն սկզբունքին յաղթա-
նակը պիտի արտահայտէ Թէ՛ ազգ. մը ու-

րիշ ազգ. մը Ժամանակիւ իրաւունք
չ'ունի : Մանկանց օգնութիւնը ազա-
տարարութեան դարձի մը կատարուին
է : Մանկանց ազատութիւնը դատարա-
րակութեան եւ առողջութեան մէջ է :
Օրէնքն ուրեմն մանկանց. անոնց տը-
կար եւ վաղը մարմինը զօրացնելը.
անոնց դուրս եւ անեցուն միտքը լու-
սաւորելը : Մանկանց կոչունք տալու
դաղմատիոյ Թոյ ընդ ամենայն ուրեք
ծառայի : Երբայն իրենց օրէնքն
ուղղակի հաստատուած կ'ըլլայ անով :
Ինչու. — վասն զի ինչպէս տունին իր-
կատմամբ Աւստրիային, եւ հաւատա-
րութեան նկատմամբ ալ յեղափոխու-
թեան ոգոյն համաձայն է : Բայց միայն
գաղղիոյ իրենց ալ բարեւորել պէտք է :
Աղքատացողներու թիւն միջոցաւ օգնու-
թիւնը առաւ ամենակեցող դարման մ'է :
Գաղղիոյ Գաղղիոյ օգնութիւն տուած
ըլլալու համար թշուառութիւնն ու
աղքատութիւնը բնակիչն ընելու է :
Մեք անոր ալ պիտի հասնինք Յաւալ-
դիւնը մանկանց օգնելով, ամենայն
միջոցաւ, բարեւոր մեղեմք եւ բար-
ւորումներ : Մեր այս խոփալոյցը Ժա-
մանակին մէջ անկաւ մեր գլխաւոր նը-
կատմալ պիտի ըլլայ : Մանկանք մեր
բոլոր հոգածութեան առարկայ պէտք
է ըլլան : Ինչու. վասն զի գիտէք Թէ՛
ինչ է անոնց ճամբարտ անունը : Ման-
կունք ապագայ ըսել են : Ներկային
սքանչելի հաղթութիւնն ընենք ապագա-
յին վրայ : Մանկանց համար ինչ որ ը-
նենք, ապագայն անոր հարկ բաշխու-
թիւնը պիտի հատուցանէ : Մանկ
զաւիթը ապագային հոնձքն է : Մա-
նուկները զարգացնելով ապագայն կը
զարգացնենք : Զարգացնել, ինչ խա-
րախոհորդ բառ : Թէ որ մանուկն ա-
ռողջ ըլլայ, ապագայն ալ առողջ կ'ըլլայ,
Թէ որ մանուկը առաքինի եւ պատ-
ուաւոր ըլլայ, ապագայն ալ փառա-
ւոր կ'ըլլայ : Մանկութիւնը լուսաւո-
րենք դատարարութեամբ, որպէս զի
քանակներու դարու Մարտիոյ ծառա-
յայնութեան կընէ, Մանկութեան ջա-
հը Ապագային ճիւղն է :

ՀԱՌԱՐԱՐՈՒՄ

Փարիզ 13 յունիս.
Ներկի իրենց ծանր դէպք մը չ'ա-
տահեցաւ : Տեղ տեղ գումարումներ
եղան, բայց առանց զինուորական մի-
ջամտութեան յրուցան : Ժողովուրդը
հանդարտ է : Կէս գիշերին խաղաղու-
թիւնը կատարեալ էր :

Փարիզ 14 յունիս.
Էլքորի Ռօզէն փարիզ հաւաւ : Տա-
րիւ կոմիսն հաշտարման լուրը առաւ կը
հանուի :

Ֆիլիպի 13 յունիս.
Նոր պաշտօնէն թիւնը ծրագրի իրենք
կը պատրաստէ զինուորական ծախքը
19 միլիոն եւ ծովային ծախքը 6 միլիոն
պահանջներու, անկէջ գտաւ ուրիշ ամեն
հնարաւոր ինչպէս թիւնց վրայ ալ խը-

բնոյ մէջ պահուած էին, կ'ըսէ վօլ-
թէր: Մուհամմէտ իր հայրենակցաց
բնութիւնը, տգիտութիւնը, դիւրա-
հասանելիութիւնը եւ աշխուժակից տը-
րամագրութիւնը լաւ ճանչէլէ ետեւ,
տեսաւ որ կրնար ինքզինքը մարդու-
րէ ձեւացնել: Միտքը գրաւ իր հայ-
րենաց մէջ ջնջել տալէականութիւնը,
որ Աստուծոյ եւ աստեղաց երկրպա-
գութեան խառնուրդի մը մէջ կը կա-
յնար, չէր թափանչուի: Գործն ազգ-
կ'ատէր եւ որ Արաբիոյ մէջ մեծ գե-
րազնացութիւն մ'առնելու վրայ էր,
եւ վերջապէս Բիստունէութիւնը՝ զոր
իր հայրենաց բոլորովը ցրուած ա-
զանդներուն զեղծումներովը ճանչած
էր: Կը պնդէր թէ Արաբիան կամ
իպրահիմի պարզ կրօնը պիտի վերա-
հաստատէ, յորմէ սերեալ կ'ըսէր ինք-
զինքը, եւ թէ զմարդիկ Աստուծոյ մի-
ութեան պիտի վերադարձնէ, որոյ
վարդապետութիւնն ամեն կրօնից մէջ
եղծեալ կ'երեւակայէր: Հասանական
է որ Մուհամմէտ, ամեն աշխոյժ ան-
ձանց պէս, իր գաղափարներուն վրայ
աստիճանաբար, զանաւոր նախ ան-
կեղծաբար քարոզէր, զանաւոր երազ-
ներով զօրացուց, ինքզինք խառնով ու-
րիշներն ալ խառնէր, եւ վերջապէս
իբրեւ հարկաւոր պաշտպանեց այն վար-
դապետութիւնը՝ զոր կը հաստատէր թէ
լաւ է: *

Մուհամմէտ հասարակ մարդ մը
չէր. Գուրէյլի ցեղէն մէկը կ'ըսէր ա-
նոր համար. «Սրանցայց Կեսարու եւ
անոր զօրութեան վրայ, բայց չ'տեսայ
վահագնեւ մը որ Մուհամմէտի պէս իր
ընկերաց պատկառանքը գրաւած ըլ-
լայ: Կարգաւ գրեւ զիտէր եւ ընդհան-
րապէս կարծուածէն աւելի ուսեալ
էր, իմանք կ'ըսեն թէ բժշկութեան
ալ տեղեկութիւն ունէր: »

«Երբեք մարդ մը, կ'ըսէ Լամար-
թին, կամ այլ կամ ակամայ անկէ աւե-
րի վաճառող մը չ'առաջադրեց ի-
րեն, քանզի իր նպատակը մարդկային
կարողութենէ վեր էր, այն է արարչին
եւ արարածոյ մէջ մտած աւելորդա-
պաշտութիւնները վերցնել: Աստուած
մարդու՝ եւ մարդու Աստուծոյ տալ,
Աստուծոյ սուրբ եւ բանաւոր դաղա-
փարը կուսակցութեան նիւթական
եւ սուտ աստուածոյ քառսին մէջ վե-
րահաստատել: Երբեք մարդ մը այն-
չափ տակը միջոցներով մարդկային
կարողութեան չափէն դուրս գործի

* Վօլթէր, տիեզերական պատմութիւն
կամ Էսէ Սիւր լէ Մէօրս, Գէ. Զ.:

մը չ'ձեռնարկեց, քանզի այնչափ մեծ
նպատակի մը յետպնդն եւ գործադ-
րութեան մէջ իրմէ դատ գործիք մը
եւ անապատին մէջ անկիւնն ալ մը
բարբարոսներէ զատ օժանդակ չ'ու-
նէր: Վերջապէս երբեք մարդ մը ան-
կէ նաւաղ ժամանակի մէջ անոր չափ
մեծ եւ սեւական յեղափոխութիւն
մը չ'գործեց աշխարհիս վրայ, քանզի
իր քարոզութեան ներքեւ գար չ'ան-
ցած իսլամութիւնը գէշնքով եւ քարո-
զութեամբ կը տիրէր Արաբիոյ երէք
մասին մէջ: Պարսկաստան, Խորասան,
Պոսթաւ, Արեւմտեան Հնդկաստան,
Ասորեստան, Եգիպտոս, Եթիովիա,
Հիւսիսային Ափրիկէի բարձր ծանօթ
ցամաք երկէքը, Միջերկրականի կղզե-
եաց շատերը, Սարմիս եւ Գաղղիոյ
մէջ մասը նուաճած էր: . . . Այս
մարդը խաբէրայ մ'էր արեւօք: Իր
պատմութիւնը ըսէ քննելէ ետեւ՝
չ'ենք կարծել: Խաբէրայութիւններ-
քին համազման կեղծն է: Բայց կեղ-
ծիքը ներքին համազման զօրութիւնը
չ'ունի, ինչպէս սուրբ ճշմարտութեան
զօրութիւն չ'ունի: . . . Փիլիսոփայ,
ճարտարապետ, առաքել, օրէնսդիր,
պատերազմող, աշխարհակալ գաղա-
փարաց, վերականգնիչ առանց պատ-
կերի կրօնի մը, հիմնադիր քան աշ-
խարհային թագաւորութեանց եւ հո-
գեւորային վահագնութեան մը, ա-
հա՛ Մուհամմէտ: Մարդկային մեծու-
թեան բոլոր աստիճաններուն մէջ ո՞ր
մարդ մեծ եղաւ անկէ: Չ'կայ անկէ
աւելի մեծ, բայց միայն նա՛ որ անկէ
առաջ մի եւ նոյն վարդապետութիւնը
ուսուցանելով, միանգամայն աւելի
սուրբ բարոյական մը քարոզած էր,
որ մտաց միակ դաշտին եղած խօսքին
օգնելու համար սուր քաջող չ'էր, որ
իր արխընը տուած էր՝ փոխանակ իր
եղբարց արխընը հեղցիլ, եւ որ փոխա-
նակ աշխարհակալի՝ մարտիրոս եղած
էր, Բայց զայն մարդիկ իրիտ մեծ հաւ-
տացած են՝ որդէսող մարդոց չափովը
չափուելի եւ եթէ իր մարդկային բը-
նութիւնն ու վարդապետութիւնը
զինք մարդաբէ կերեւցնեն անհա-
ւատացեաց աչքին առջեւ, իր առա-
քնութիւնն ու անձնութիւնը
զինքը Աստուած քարոզած են: »

Պ. Վ. ՊԱՌՆԱՍ.

* Լամարթին, Պատմ. Թուրքիոյ. Հատ. Ա.
Գլ. Ա.:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԵՕԹԻՆ ԽՕՍԻՐ
ԱՌ. ՏԳԱՅՍ
ՏՊԵԱԼ Դ. ԹԵՂՈՒՍԵԱ
Տպարարութիւնը կրթական եւ
հրահանգիչ խրատներ պարունակող
ընտիր գրքոյն մ'է՛ Վ. Եր. Վարրիէ
եպիսկոպոսի աշխատութեամբ: Առ-
սեղենէն անցնելով թարգմանուած, որ
չատ օգտակար կրնայ ըլլալ ծնողաց
եւ մանաւանդ գաղափարակց ձեռքը:
Սը ծախուի Պ. Յ. Վալաֆեանի
գրատունը: Վին 5 զուրուշ:

ՊԵՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՎՄՈՒՑ
ՄԵԹԻՆ ՆԵՐՍԵՍ ԶԱՅՐԱՊԵՏԻՆ ԶԱՅՐՑ
ԱՅԵԱՏԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԵՐ. ԳԱՐԵՅԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ
Սը ծախուի Պ. Յ. Վալաֆեանի
գրատունը: Վին 3 զուրուշ:

ԵՂԻՔԱՆԻՐ ՏԻՒՄԷ
ԱՄՕՐԻ
ԹԱՐԳԱՆԵԱՑ Մ. ՄԱՍԻՐԵԱՆ
ԶՄԻՌՆԵԱ
ՏՊԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆ
Վզէքսանգր Տիւմայի ամենէն ըն-
տիր եւ հետաքրքրալից վիպասա-
նութիւններէն մէկն է՝ Մեծ. Պ.
Մամուրեանի վարժ եւ յաջող գրչովը
հայերէն աշխարհաբաւ լեզուի գար-
ձած: Սը ծախուի Պ. Յ. Վալաֆեանի
գրատունը. զին 20 զուրուշ:

ՊԱՏԱՐԱԿՈՒՆ ԶԱՅՐՑ
Սիւեալ 1772 ամէ փրկին մինչեւ ցամա 1860
ՀԱՆԴԵՐՁ ԿԱՐԵՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՄԻ
Ե Ի
ԺԱՄԱՆԱԿԱՐՈՒԹԵԱՄԻ ԵՐԵՆԵԼԻ ԽՐԱՑ
Աշխատութիւններ
Աւետիս վարժապետի Պէրպէրեան

Փափագեան Ստեփան Էֆէնտին
Ըւերտիս պատուելիի այս աշխատա-
սիրութիւնը ձեռք անցուցած ըլլալով,
միտք ունի զայն երեք եւ կամ եր-
կու հատորի բաժնելով (որ 990 երե-
սի մօտ կրնայ ըլլալ) ամբողջ հրատա-
րակել. եւ այս հրատարակութեան
համար բաժանորդագրութիւն մը բա-
ցած է հետեւեալ պայմաններով:
1. Բաժանորդագրութիւնը կան-
խիկ վճարմանը երեք արծաթ մէճիւտ
է ամբողջ գործին համար:
2. Հրատարակութեան սկսելէ վեր-

ջը չորս արծաթ մէճիւտ:
3. Իսկ տպագրութիւնն աւար-
տելէ վերջը հինգ արծաթ մէճիւտի
պիտի վաճառի ամբողջ գործը:
Բաժանորդագրութիւնը կրնաւ ու-
նիլն Վ. Վարրիէի Վիստակի վար-
ժարանին մէջ՝ յատուկ տպուած եւ
իւր սպորտքութեամբ վաւերացած
ընկալազրով. նաեւ մայրաքաղաքիս
մէջ զանաւոր անց գրափառաց եւ
Սահմաւ փառան Վոյաճի Սանուկ
աղայի միջոցաւ ու զորը կրնայ լաճ ա-
նորդ գրուիլ:

ՅԱՆՈՒՑՈՒՄ
Սալմաթիւմարդ թաղի Ս. Հալի-
միմեանց վարժարանի աշակերտահայ
ձեռագործները վիճակահանութեան
դրուած են, 2000 տոմարի վրայ 2 ա-
կան դէն, որոնցմէ 200 թիւը պիտի
չահին, առաջինը 150 եւ վերջինը 7 զը-
արժողութեամբ գործ մը:
Ցամախները կը ծախուին Գարա-
կէօմիւրի եկեղեցւոյն բանկայը, եւ
գաղղիին հազարաւորաց քով:
Վիճակահանութիւնը յաւաքիկայ
Մարտի սկիզբը պիտի կատարուի:

Այս լրագիրը չարախմբ վեց անգամ կը
հրատարակուի, երկ քաղաքի հինգ քաղաքի եւ
չաբաթ օրերը մեծ թիւով եւ միւս օրե-
րը մանր թիւով: Բաժանորդագրութեան
անգիրն են Վ. Պէրպէրեան խառն վերի
յարկը թիւ 6 Մասիսի խմբագրատունը:
Իսկ դաւառաց մէջ հետեւեալ հոգա-
բարձուաց սենեակները:
ԻԶՄԻՐ. Ստեփան աղա Տէալեան.
ԵԿԻՄՊԻՐԻԱ. Թորոս աղա Ռոկիւրիչ.
ԱՏԱՔԱՅԱՐ. Գարաթիւն աղա Նաղա-
րէ թիւ 1.
ՏՐԱՊԵՆՏ. Խաչատուր աղա Էմմանուէ.
ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Զա-
քարեան.
ՍԵՐԱՍՏԻԱ. Վարդան Էֆէնտի Արգար-
եան.
ԵԱՏ Մ. աղա Խաչիկեան.
ՀԱԼԷՊ. Նիկողայոս աղա Տէր Մար-
գարեան.
ԵՐԶՐԱՅԱՆ. Ընթերցարան Թանգարան
ՎԱՆ. Գրիգոր աղա Խաճանեան.
ՈՐԻՔ. Գաղաթիւնի ստորագրութիւն ու-
ղղիներն այս անգիրէն մէկուն հետ կրնան
թղթակցիլ:

Խմբագիր-Տիօքէ
Կ. Ս. ԻԿԻՈՒՅԵԱՆ
Ի ՏՊԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՐԵԱՆ ԼՐԱԳՐԱՐ
Կ. ՊԱՌՆԱՍ ԶԵՂԻՒԼԻ ԽԱՆ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ	
ԸՆԹԱՅՐ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ	
7 ՅՈՒՆՎԱՐ	
(ՕՍՏԱՆԵԱՆ ԼԻՐԱՅԻ ՀԵՏ 100 ԼՐԱՐՈՒՄԵՆ)	
Լոնարա 3 ամիս զուրուշ 140/1—140/1	
Մարտիկա » ֆրանք 22,95—22,90	
ԸՆԹԱՅՐ ԳՐԱՄՈՑ	
7 ՅՈՒՆՎԱՐ	
Անգլ. լիրա զուրուշ 109,35	
Նաբոյէտն ոսկի » 87, 8	
Իմբէթիալ ոսկո » 89, 8	
Քըրքից » 51,48	
Հինգ ֆրանք » —	
Հինգ շոց » 403/1—403/1	
Պղինձ » 407/1	
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 7 ՅՈՒՆՎԱՐ	
ԱՐՄՏԻՐ	
Յորեն կարծր Պէսարապիա 29 — 30	
» » Աղաղ 29 — 30	
» » Պալլէք 29 — 30	
» » Պուրկաղ 28 — 29	
» » Թէքիւրաղ 28 — 29	
» կակուղ Աղաղ 27 — 28	
» » Պէսարապիա 27 — 28	
Կիրքա թուան 27 — 28	
Յորեն կակուղ Պուրկաղ 23/1 — 26	

» » Վառնա 23/1 — 26	
» » Պալլէք 23/1 — 26	
Եգիպտացորենի թուան 43 — 44	
» » Անատուլ 43 — 44	
Գարի թուան 44 — 44 1/2	
» » Անատուլ 44 — 44 1/2	
ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ	
ԽՈՁԱԿ ԶՈՐ	
Պուրա զուրուշ)	
Անատուլ)	
Քուրս ֆրանք (աղանք չկայ)	
Էսթրիէ)	
Ծակած)	
ԲԱՄՊԱԿ	
Կէլէ հօխա 44/1 —	
Իզմիր » 42/1 —	
Ատանա » 41 —	
Պարսկաստան » 9/1 —	
Վրաստան » 40 —	
ԲՈՒՐԳ	
Անատուլ լուսացուած հօխա 44/1 —	
» » Հլուացուած » 7/1 —	
Բուլկի լուսացուած » 42 —	
» » Հլուացուած » 8 —	
Կաւան լուսացուած » —	
» » Կէս լուսացուած » 44 —	
» » Հլուացուած » 23 —	
Տոպրոն » 9 —	
Եսկի Շէկիր » 7 —	

ՄԱՂԸ	
Պարսկաստան հօխա 44 — 42	
Անատուլ » 44 —	
Ճիրակ » —	
ՃԼՅԻՐ	
Գայսերի Ա. անաղ հօխա 46/1 — 46/1	
» Բ. » » 45/1 —	
Էնկիւրի » » 46 —	
Թոգալ » » 44/1 — 43	
Աքէլ » » 42 — 43	
Եօղլա » » 43 —	
Զօրու » » 44 —	
ԹԻՅԹԻՐ	
Էնկիւրի հօխա 48 — 50	
Գաւառապոլ » » 48 — 50	
Պէրաղա » » 48 — 50	
Զէրէք » » 27 —	
ԱՅԹԻՄՈՐԹ	
Ամսիա 9 — 49/1 կտոր մէկ 0. 1.	
Եօղլա » » » »	
Սիւս » » » »	
Էրզրու » » » »	
Գալաթի » » » »	
ՉԼԹ	
Մուստիա հօխա 8/1 —	
Ալալ » » 9 —	
Սաք » » 11 —	
Միտիլի » » 9 —	

Պղինձ թողալ երկրին մէջ 40 —	
Սալէպ Գաթիւմալ հօխա 44 — 46	
Աֆիս » » 440 — 420	
Քիլիք » » 28 — 36	
Սուսամ » » 4/1 —	
» » Բուլկի » 42 —	
» » Բուլկի » 50 — 56	
ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ	
Խահլէ Բիւս. անաղ 400 հօխ. 810 — 830	
» » Էնկիւրի » 730 — 780	
Շաքար փշի Անգլ. Կն. 245 —	
» » Գաղղ. » 240 —	
» » Գաղղ. » 290 —	
Զայ Գոնի » հօխա 58 — 70	
» Բէք » 28 — 40	
Անաղ (զաւայ) Կն. 870/1 — 400	
Պղպեղ (պղպեղ) հօխա 5/1 —	
Լեւալ (Էնկիւր) Պէրկալ » 415 — 435	
» » Մարա » 450 — 455	
Չինք տախ » 400 հօխա ֆր. 108 — 410	
Երկաթ ձողածե » 60 —	
» տախ » 65 —	
» Բուլեպ » 70 —	
Քարֆիւն » 88 —	
Բրինձ Խալիկա 400 ֆր. ֆր. 38 — 93	
Կարաղ Կղ Ռուսի » 121 —	
Խալկար » » 24 — 27	